

**Վ. Լ. ԱճԵՄՅԱՆ, ԳՐԱԿԱՆ ԱՐԽԱՄԱՏԱԴԱՅԵՐԵՆԴԻ ձԵՎԱԴՐՈՒՄԸ,  
ԵՐԼԱՆ, 1971, 292 էջ**

Գրական լեզուների պատմության ուսումնասիրությունը լեզվաբանական գիտության կարևոր խնդիրներից է: Գրա կարիքն առավելապես սուր է զգացվում վերջին ժամանակներս, երբ լեզվաբանական նորագույն ուղղությունները հիմնականում շեշտը դնում են լեզուների համաժամանակյա-կացութային ուսումնասիրության վրա՝ գրեթե տեղ չտալով պատմականին:

Հայոց լեզվի պատմության հետազոտման բնագավառում քիչ բան չի արված: Սակայն ակասանքով պետք է ընդգծել, որ մինչ այժմ չունենք գրական հայերենի ու նրա տարբերակների ամբողջական պատմություն: Թերևս դրա ստեղծման գլուխգործոցը հաղթահարելի ուղին նրա առանձին տարբերակների պատմության ուսումնասիրությունն ու ամբողջացումն է: Հասկանալի է, որ այս նպատակին ուղղված յուրաքանչյուր հիմնավոր հետազոտություն միայն ուրախությամբ կարող է ընդունվել:

Այդպիսի հետազոտություն է բանասիրական գիտությունների թեկնածու Վանուհի Աճեմյանի «Գրական արևմտահայերենի ձևավորումը մենագրությունը, որը լույս տեսավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությամբ»:

Ընդհանրապես արևմտահայ աշխարհաբարի պատմության ուսումնասիրության ուղղությամբ հայագիտության մեջ, իհարկե, փորձեր կատարվել են: Բայց հատկապես դրական արևմտահայերենի պատմության ստեղծման ճանապարհին սա ավելի հաջողված փորձ է՝ որոշակի խնդիրներով ու նպատակներով, որոնցով էլ որոշվում է նրա գրավելիք տեղը հայագիտության մեջ: Այլապես այն ուշագրության չէր կարող արժանանալ: Աճեմյանի գլխավոր նպատակն է եղել հետազոտել և շարադրել գրական արևմտահայերենի զարգացման ու ձևավորման պատմությունը: Ըստ այդմ՝ հեղինակն ընդգրկել է 1700—1870 թթ. ընկած ժամանակաշրջանը: Նա ձգտել է որոշակիորեն տարբերել գրական արևմտահայերենը ու գրել հիշյալ ժամանակաշրջանի նաև և ոչ թե ընդհանրապես արևմտահայ աշխարհաբար լեզվի պատմությունը: Նա ճիշտ է ըմբռնել գրական լեզու հասկացությունը՝ տալով այսպիսի սահմանում, «Գրական լեզուն տվյալ ժողովրդի գրավոր հաղորդակցման այն ընդհանուր միջոցն է, որ հանդես է գալիս որպես գեղարվեստական, հրապարակախոսական, գիտական գրականության ու դասագրքերի լեզու և աստիճանաբար հասնում տարածվածության, մշակվածության ու նորմավորվածության բարձր աստիճանի» (էջ 5):

Այստեղից ելնելով՝ նա մյուս կողմից տարբերություն է տեսնում գրական լեզու և գրավոր լեզու հասկացությունների (իհարկե և դրանց իրական գոյության) միջև: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր գրական լեզու միաժամանակ գրավոր լեզու է, որովհետև գրի առնված է, բայց գրավոր լեզվի յուրաքանչյուր դրսևորում անխտիր չի կարող գրական լեզու լինել, քանի որ կարող է գրի առնվել նաև բարբառը, որը գրական լեզու չէ (իսկ այդպիսի փաստերը հայ իրականության մեջ շատ են): Հեղինակը ճիշտ կողմնորոշումով ընդգծում է, որ գրական լեզուն պատմական կատեգորիա է, և որն է գրավոր լեզու հանգամանքների բերումով ժամանակի ընթացքում կարող է ձեռք բերել այնպիսի հատկանիշներ, որպիսիք են ընդհանրացումը, մշակվածությունը, միասնական նորմավորման ձգտումը, ու այդ ճանապարհով վերածվել գրական լեզվի: Բայց քանի որ դա տեղի է ունենում տեականորեն, աստիճանաբար և ոչ թե կտրուկ անցումով, ուստի զրգացում է լինում միանգամից մատնանշել սահմանագիծը: Այնուամենայնիվ «կարելի է «գրական» տերմինը օգտագործել նաև գրական լեզվի կազմավորման շրջանի վերաբերյալ, երբ արդեն առկա է բարբառային հիմքի որոշակի ընդհանրություն», — եզրակացնում է հեղինակը (էջ 6):

Գրական լեզվի կազմավորման ու զարգացման այդ պրոցեսները շատ բնորոշ են հայ իրականությանը՝ թե՛ արևմտյան և թե՛ արևելյան հատվածներում, որտեղ, ըստ մեր ժողովրդի պատմա-հասարակական-քաղաքական ու տնտեսական պայմանների՝ նոր հայերենը կամ աշխարհաբարը տրոհվեց և ունեցավ գրական երկու տարբերակներ՝ արևելահայ և արևմտահայ գրական դրսևորումներով, որոնցից մեկին էլ, ինչպես վերը նշեցինք, նվիրված է գրախոսվող աշխատությունը:



Նման բնույթի աշխատության հեղինակին բնականաբար պիտի հետաքրքրեր այն հարցը, թե ի՞նչն է հիմք դարձել արևմտահայ գրական լեզվի կազմավորման համար: Եվ, իրոք, Վ. Աճեմյանը դա էական խնդիր է համարել, խորհել է այդ մասին և եկել այն եզրակացության, թե արևմտահայ գրական լեզվի համար հիմք է ծառայել Պոլսի հայերեն բարբառն իր ընդհանրացած ձևով, նա տարրերում է Պոլսի բարբառը որպես այդ քաղաքի հայ բնակչության տեղական-առտնին հաղորդակցման միջոց և Պոլսի աշխարհաբարը, որը որոշ ընդհանրություն էր ձեռք բերել արևմտահայ շատ բարբառների մեջ ու այդպիսով զգալի չափով դուրս եկել այդ քաղաքի շրջանակներից: Հեղինակի պատկերացմամբ դա այն հայերենն է, որ ժամանակին ումանց կողմից նկատվել ու անվանվել է «ատենական» կամ «քաղաքական» հայերեն:

Սա տրամաբանական է, որովհետև, իսկապես տեղական բարբառը նույնությամբ միանգամից չի կարող բարձրանալ գրական լեզվի աստիճանին, նա դրան կարող է հասնել ընդհանրության ձեռքբերումով, գործառության շրջանակների ընդլայնումով, իսկ այդպիսի ընդհանրացման համար հող կարի Վճռական գործոններ էին Պոլսի դերը արևմտահայ բնակչության տնտեսական, մշակութային կյանքում և համապատասխան բարբառի կառուցվածքային ընդհանրությունները արևմտահայ մյուս բարբառների հետ:

Կանգնելով ճիշտ ուղու վրա՝ Վ. Աճեմյանը կարողացել է նկատել հանգուցային հարցերը և սահմանադրել այն շրջանակները, որոնցում պիտի պարփակվեին իր անելիքները: Նա գրել է. «Զգալի է մնացել գրական արևմտահայերենի կազմավորման ու նորմավորման, արևմտահայ գրողների, քերականագետների և բառարանագետների լեզվամշակման ուղղությամբ կատարած աշխատանքի, ինչպես նաև «գրապայթյալի» սկզբնավորման և ընթացքի հարցերի խոր և համակողմանի ուսումնասիրման պահանջը» (էջ 9): Եվ իր աշխատությունն էլ կառուցել է ըստ այդ պահանջի:

Գրքի առաջին գլուխը ընդգրկում է արևմտահայության մշակութային գլխավոր կենտրոններին և 1700—1840 թթ. ընթացքում գրաբարի ու աշխարհաբարի գործածության շրջանակներին վերաբերող հարցերը: Այնտեղ մատնացույց է արվում, որ Կիլիկյան հայկական թագավորության անկումից հետո հայության առանց այն էլ ծանր վիճակն է՝ ավելի է ծանրանում, ժողաբնական դժպիքները հանգեցնում են այն բանին, որ Հայաստանը բաժանվում է թուրքական ու պարսկական տիրակալությունների միջև, կազմավորվում ու վերակազմավորվում են հայ գաղթօջախներ: Դեռ բյուզանդական կայսրության ժամանակներից Կոստանդնուպոլսում հաստատված հայ բնակչության շահակը հետագայում ցնալով ստվարանում է և արդեն XVIII դ. վերջերին պատկառելի թիվ կազմում: «XVII դարում Կ. Պոլիսը արևմտահայ հասարակական կյանքի կենտրոնն էր»,— արձանագրվում է աշխատության մեջ (էջ 17): Հասկանալի է, որ ժողովրդի այդ հատվածի համար գրական լեզվի ստեղծման գործում էական դեր պիտի խաղար այդ կենտրոնը: Մշակութային կյանքն ընթանում է դպրոցների հիմնադրումով, թատերախաղերի ներկայացումներով, զանազան դերքերի տպագրությամբ, հրապարակագրության ու մամուլի սկզբնավորումով, աստիճանական զարգացումով և այլն: Աշխատության մեջ բերվում են համապատասխան տվյալներ՝ ըստ առանձին բնագավառների: Նշվում է, որ այդ ժամանակներում որոշակիորեն զգալի էր հետզհետե ընդհանրացող աշխարհաբարի գործածությունը մշակութային ձեռնարկումների մեջ, սակայն գրաբարը որպես գրական լեզու դեռ իշխող դիրք ուներ: «...Արևմտահայ աշխարհաբարը XVIII դարում միայն երկրորդական գրավոր լեզու է. առաջնությունը այդ տեսակետից պատկանում է գրաբարին...» (էջ 23—24): Հետագայում, իհարկե, գրությունը փոխվում է, քանի որ գնալով գրաբարը տեղի է տալիս, և աստիճանաբար ձևավորվում ու տարածվում է գրական աշխարհաբարը: Ենթադրյալի գործածության շրջանակները զգալիորեն ընդարձակվում են XIX դարի առաջին տասնամյակներից սկսած» (էջ 25): Նպատակ ունենալով վեր հանել դրա պատճառները՝ հեղինակն այնուհետև ավելացնում է. «Դա կապված էր գարու աշխարհականացման ոգու հետ, որ ֆրանսիական հեղափոխությունից հետո տարածվում էր ամենուրեք, մուտք գործելով նույնիսկ հետամնաց Թուրքիա, հատկապես, Կ. Պոլիս» (էջ 25—26): Նա չի մոռանում նշել արևմտահայության ազգային ինքնագիտակցության խթանման մեջ թուրքական տիրապետության տակ հեծող մյուս քրիստոնյա ժողովուրդների, ինչպես նաև արևելահայության ազատագրական պայքարի վառ օրինակների ունեցած դերը: Ապա արձանագրելով արևմտահայության ազգային զարթոնքը՝ համոզիչ տվյալներով ցույց է տալիս գրական արևմտահայերենի գործածության սահմանների ընդլայնումը: Նա ճշտությամբ է բնութագրում գրաբարի և աշխարհաբար գրական լեզվի գործառական հարաբերությունը հիշյալ ժամանակներում. «Գրաբարը համարվում է զարգացած դասին արժանի լեզու, որ ընդունակ է արտահայտելու



անհամեմատ ավելի ներգոյություններ, քան աշխարհաբարը. վերջինս, ընայած իր աղքատությանը, «ազդին մեծամասնության օգուտը առաջ տանելու» նպատակին է ծառայում» (էջ 37)։

Երկրորդ գլխում քննվում է գրական աշխարհաբարի կազմավորման ընթացքը 1700—1840 թթ.։ Լեզվի կառուցվածքային իրողությունների ուսումնասիրության առումով սրանով է ըսկըսվում բուն հետազոտությունը։ Այս ժամանակաշրջանում արևմտահայերենով հրապարակված դրականության լեզվի բնորոշ փաստերի վերլուծումով հեղինակը մեկ առ մեկ ցույց է տալիս հնչյունային, բառային և քերականական իրողությունների հաստատումը, ձևավորումը, կուտակումն ու ամբողջականացումը, որոնք հանգեցնում են գրական լեզվի կերպարանավորմանն ու հաստատմանը տվյալ ժամանակաշրջանում։ Եթե նախորդ գլխում հիմնականում իշխում էին պատմա-հասարակական նախադրյալներին վերաբերող տվյալները, ապա այստեղ ասպարեզը տրվել է լեզվական փաստերին։

Գրական աշխարհաբարի պաշտոնական հաստատման, նրա իրավունքների պաշտպանության գործում վճռական նշանակություն ունեցավ մշակութային-հասարակական այն շարժումը, որն ընդունված է կոչել զբաղալիս։ Դա գրեթե նույն ժամանակամիջոցում սկզբնավորվեց ու ծավալվեց թե՛ արևմտահայության և թե՛ արևելահայության մեջ։ Գրքի հաջորդ գլուխը հատկացված է հենց այդ հարցի ուսումնասիրությանը։ Հեղինակը շատ լավ է պատկերացրել, որ այդ երևույթը հայ իրականության մեջ սոցիալ-տնտեսական ու մշակութային որոշակի հիմքեր ուներ, ուստի այդ պատճառով էլ հետազոտությունը տարել է արևմտահայության 1840—1870 թթ. հասարակական պայմաններին և հատկապես մշակութային կյանքի բացահայտման ուղղությամբ։ Նա մեկ առ մեկ քննում ու վեր է հանում գրապայքարի ծավալման գործոնները՝ ցույց տալով աշխարհաբարյանների հաղթանակի պատմական անխուսափելիությունը։ Գրական աշխարհաբարի հաստատումը դառնում է անօթի իրողություն։ Վաթսուհական թվականներին արդեն միայնաց հաջորդում են Մ. Քերեճճյանի, Ա. Այտընյանի, Ս. Փափաղյանի աշխատությունները, որոնք արձանագրում են արևմտահայ աշխարհաբարի ամբողջականացած համակարգը։

Արևմտահայության հասարակական կյանքի ցուցադրման խորքի վրա այս նշանակալից շարժման հանգամանակից պատմությունը շարադրելուց հետո Վ. Աճեմյանը գրում է. «Հայ իրականության մեջ XIX դարի 40-ական թվականներից ծավալվող «գրապայքարի» առանցքը ոչ միայն աշխարհաբարի իրավունքների տեսական պաշտպանությունն էր, այլև նոր գրական լեզվի մշակման խնդիրը» (էջ 169)։ Այդ կարևոր խնդիրը նա միանգամայն ճիշտ է նկատել, ուստի և իր աշխատության վերջին երկու գլուխները նվիրել է դրան։ Հասկանալի է, որ այդ նպատակով աշխատանքները պիտի տարվեին բառապաշարի հարստացման և մշակման, քերականական կառուցվածքի կանոնավորման ու նորմավորման ուղղություններով։ Դրանց վերահանման էլ հետամուտ է եղել հեղինակը։ Բառապաշարի հարստացման և մշակման բնագավառում անհրաժեշտ էր հաղթահարել մի շարք դժվարություններ, որոնք արտահայտվում էին եղած նյութի օգտագործման մեջ հանդես բերվող կողմնորոշմամբ։ Վ. Աճեմյանը ուսումնասիրել և մատնացույց է արել գրաբարյան, բարբառային, օտար բառերի օգտագործմանը վերաբերող հարցերը և բազմաթիվ օրինակներով ցույց է տվել համապատասխան աշխատանքի ընթացքն ու դրան զուգահեռ՝ զանազան տեսակետների դրսևորումները։ Նա չի սահմանափակվել, այսպես ասած, միայն պատրաստի նյութի օգտագործման ցուցադրումով, այլ հանգամանորեն կանգ է առել հիշյալ ժամանակաշրջանում ծավալված բառակազմական աշխատանքների վրա։ Հետաքրքրական են տարբեր բառարանների համեմատությունները՝ արևմտահայ գրական լեզվի բառապաշարի հարստացման ու մշակման գործում բառարանների ունեցած դերի վերահանումով։

Քերականական կառուցվածքի կանոնավորման ու նորմավորման ընթացքը ցույց տալու նպատակով Վ. Աճեմյանը շեշտը դրել է քերականական ձևերի ընդհանրացման ու միօրինականացման վրա։ Նրա բերած փաստերից ընթերցողը համոզվում է, թե ինչպես գրական արևմտահայերենի քերականական կառուցվածքը ձգտում է կուռ համակարգայնություն։ Այս գլխով էլ ամբողջանում է աշխատությունը, որը արևմտահայ գրական լեզվի կազմավորման ու կերպարանավորման դիտական պատմություն է՝ հետազոտական բնույթով և որպես այդպիսին գալիս է արժանավոր տեղ գրավելու հայագիտական գրականության մեջ։

Աշխատության հաջողությունը պետք է բացատրել հեղինակի բարեխղճությամբ, մասնագիտական պատրաստությամբ, որոնք ներդաշնակ կերպով զուգակցվել են դարաշրջանի հասարակական կյանքի, քննարկվող խնդիրների վերաբերյալ հանդես բերված բազմաթիվ ու բազմապիսի տեսակետների, իհարկե, նաև լեզվական իրողությունների խոր ու համակողմանի հետազոտմանը: Այդպիսի աշխատանքի ներդրումով նման արդյունքի ստացումը միանգամից օրինաչափ է:

Ցանկալի կլիներ, որ Վ. Աճեմյանը նույնպիսի նվիրումով շարունակեր իր հետազոտական աշխատանքը՝ ընդգրկելով գրական արևմտահայերենի զարգացման ընթացքը հաջորդ ժամանակահատվածներում:

Ա. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Բաճաթաբանական գիտությունների դոկտոր